Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական երիտասարդական գիտաժողով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ
Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

համակարգ: Այդ կարգավիճակը մարզի ժամանակագրորեն վերջին կարգավիճակն էր ԽՍՀՄ օրոք: ԽՍՀՄ լուծարման պահին մարզը դեֆակտո դուրս բերված էր ԱդրԽՍՀ վարչական ենթակայությունից:

11. Իրավական տեսակետից հատկապես կարևոր է այն փաստը, որ ԼՂՀ-ն լեգիտիմ կայացել է մինչև Ադրբեջանի Հանրապետության միջազգային ճանաչումը:

1991թվականի սեպտեմբերի 2-ին «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» հռչակագրի ընդունումը տարիների ընթացքում լոկ հաստատեց ազատության ու անկախության ուղին ընտրած Արցախի ժողովրդի կամքն արտահայտող այդ համարձակ քաղաքական որոշման պատմական անհրաժեշտությունը և այն դարձավ ճակատագրական իրադարձություն Արցախի բազմադարյան պատմության մեջ:

Արժե առանձնապես ընդգծել, որ սկսված պատերազմի, պաշարման վերաճած շրջափակման, Ադրբեջանի կողմից անանախադեպ ճնշման պայմաններում բոլոր քայլերը ձեռնարկվել են նախկին ԽՍՀՄ օրենսդրությանը, ինչպես նաև միջազգային իրավունքի նորմերին խիստ համապատասխան: Այդ քաղաքական որոշումը հեռանկարում նպատակ ուներ վերականգնել նաև պատմական արդարությունը, որը կայանում է Հայաստանի հետ վերամիավորվելու բնական ձգտման մեջ:

Սիեր Հարությունյան
«Կանաչ» գիտական կենտրոն

ԼՂՀ պաշտպանության բանակի կազմավորման պատմությունից

Արցախյան շարժումը նշանավորվել է ռազմաքաղաքական մի շարք հաղթանակներով, որոնք մտել են հայոց բազմադարյան պատմության արդի փուլի, հատկապես հայ ազգային ազատագրական պայքարի տարեգրության մեջ: Կարևոր ձեռքբերումը ԼՂՀ պաշտպանության բանակի(ՊԲ) կազմավորումն էր: Մի քանի փուլ անցած այդ գործընթացի առանձնահատկությունն այն է, որ կամավորական-աշխարհազորային ջոկատների վերաճումը կանոնավոր զորամասերի տեղի էր ունենում մարտական գործողություններին զուգահեռ, Արցախի դեմ Ադրբեջանի ձեռնարկած ագրեսիայի ծանր պայմաններում: Ուստի, ռազմապաշտպանական եւ բանակային ենթակառուցվածքների ստեղծման խնդիրները հաճախ բխում էին հենց կյանքի ու դաժան իրականության պահանջներից: Ակնհայտ է, որ կանոնավոր ու մարտունակ բանակի կազմավորումը թելադրված էր նյութական ու

մարդկային ռեսուրսներով գերակշռող Ադրբեջանի ագրեսիային արդյունավետորեն դիմագրավելու եւ իր բնօրրանում արցախահայության ապրելու իրավունքը պաշտպանելու անհրաժեշտությամբ:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ ՊԲ-ի ստեղծման գործընթացն ունեցել է 4 փուլ:

Սկզբնական փուլում 1988թ. փետրվարի 22-1992 թ. փետրվարի 24-ի ընթացքում ձեւավորվել են մի շարք կամավորական ինքնապաշտպանական ջոկատներ ու աշխարհազորային խմբեր, որոնք սկզբնավորվել են Ասկերան ավանի վրա աղդամցիների հարձակումից ու սումգայիթյան եղեռնագործությունից անմիջապես հետո եւ, փաստորեն, պաշտոնական կարգավիճակ են ստացել 1992 թ. փետրվարի 24-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի (ԳԽ) համապատասխան որոշումով: Այդ ժամանակ ինքնապաշտպանական ջոկատների խնդիրն էր ադրբեջանցիների հարձակումներից պաշտպանել խաղաղ բնակավայրերը: Անհրաժեշտությունից դրդված տեղերում ստեղծվում էին աշխարհազորային խմբեր, որոնց, առավել վտանգված իրավիճակներում, օգնության էին հասնում քաղաքներում կազմավորվող զինված խմբերն ու ջոկատները: Կային նաեւ հատուկ պատրաստություն անցած կամ զինվորական փորձառություն ունեցող կամավորների մարտունակ ջոկատներ, որոնք գործում էին հիմնականում Հյուսիսային Արցախում, Հադրութի սահմանամերձ գոտում, Շուշիի շրջանի հայկական գյուղերում եւ այլուր: Հարկ է նշել, որ ջոկատների ստեղծումն ու գործունեությունը իրականացվում էին ընդհատակում, որովհետեւ դրանք ԽՍՀՄ իշխանությունների կողմից դիտվում էին օրենքից դուրս, իսկ ՆԳՆ Ներքին զորքերին(ՆԶ) իրավունք էր վերապահված ցրել դրանք առգրավելով առկա զենքն ու զինամթերքը:

Արցախի ինքնապաշպանության պատասխանատուների խնդիրները որոշակի փոփոխություններ կրեցին ԼՂՀ տարածքից ԽՍՀՄ ՆԳՆ ՆԶ-ի ստորաբաժանումների դուրսբերումից(1991 թ. դեկտեմբերի 26-ից) հետո: Արցախ գործուղված Ա. Տեր-Թադեւոսյանի ղեկավարությամբ նոր թափ ստացավ ինքնապաշտպանական ուժերի կազմավորումը: Հադրութի եւ Մարտունու շրջաններում դրսնցում ընդգրկվեցին 400-ական, Ասկերանում, Մարտակերտում եւ Ստեփանակերտում 500-ական մարտիկներ: 1991 թ. հոկտեմբեր- 1992թ. փետրվար ժամանակահատվածում նվաճվեցին մի շարք ռազմական հաղթանակներ, որոնք ամրապնդեցին ինքնապաշտպանական ջոկատների դիրքերը, նկատելիորեն համալրվեց նրանց սպառազինությունը, հրամանատարական կազմը մարտավարական փորձ ձեռք բերեց, բարձրացավ հայ

ռազմիկների մարտական ոգին: Դրանք գործոններ էին, որոնք առավելագույնս նպաստեցին ազատամարտիկների մեջ սեփական ուժերի նկատմամբ վստահության ու հաղթելու վճռականության ձեւավորմանը, որոնց շնորհիվ հաջողվեց համեմատաբար կարճ ժամանակամիջոցում մինչեւ 1992 թ. մայիսի 18 ճնշել ԼՂՀ-ի տարածքի թշնամական բոլոր կրակակետերը:

Մշտապես կատարելագործվում էր նաեւ ղեկավարման համակարգը՝ կադրային ու կառուցվածքային բարելավումների միջոցով: Այսպես, ԼՂՀ ԳԽ նախագահության 1992 թ. մարտի 4-ի որոշմամբ զնդապետ Ա. Ի. Տեր-Թադեւոսյանը նշանակվեց Արցախի ինքնապաշտպանության ուժերի(ԻՊՈՒ) հրամանատար, որի գործառութային պարտականությունները 1990թ. սեպտեմբերի 10-ից, փաստորեն, կատարում էր Ա. Կարապետյանը: Նույն օրը հաստատվեց նաեւ ԼՂՀ պաշտպանության խորհրդի կազմը ԼՂՀ ԳԽ-ի խոսնակ Ա. Մկրտչյանի նախագահությամբ: Իսկ մարտի 26-ին ԼՂՀ նախարարների խորհրդին առընթեր ստեղծվեց Պաշտպանության կոմիտե (ՊԿ), որն այնուհետեւ վերանվանվեց Ինքնապաշտպանության կոմիտե (ԻՊԿ), որի նախագահ նշանակվեց Ս. Սարգսյանը: Նորաստեղծ մարմինը, առաջնորդվելով ԼՂՀ ԳԽ եւ Նախարարների խորհրդի որոշումներով ու կարգադրություններով, կազմակերպեց ինքնապաշտպանական ջոկատների միավորման, բանակի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործը, ձեւավորեց ու ղեկավարեց ԻՊՈՒ վարչության աշխատանքները:

ՊԲ-ի կազմավորման երկրորդ փուլի (1992 թ. փետրվարի 24-օգոստոսի 14) հիմնական առանձնահատկությունն այն էր, որ ավարտին հասցվեց ԼՂՀ-ի ներսում ազատագրական մարտերի շարքը, պատերազմը «նահանջեց» հանրապետության սահմաններից անդին, Ադրբեջան-ԼՂՀ հակամարտությունը թեւակոխեց որակական նոր փուլ: Ամենանշանակալի իրադարձությունը Շուշիի ազատագրումն էր մայիսի 9-ին, որն առ այսօր նշվում է նաեւ որպես Պաշտպանության բանակի օր:

ԼՂՀ ԻՊԿ նախագահի «Պաշտպանական շրջանային լրակազմի ուժերի ու միջոցների կառուցվածքի մասին» հրամանով, 1992 թ. օգոստոսի 14-ին ստեղծվեցին 6 պաշտպանական շրջաններ: Միաժամանակ, առկա նյութական ու ռազմական հնարավորություններն առավել արդյունավետ օգտագործելու, իշխանության բոլոր լծակները մեկտեղելու եւ ռազմաճակատում արմատական բեկում մտցնելու նպատակով, 1992 թ. օգոստոսի 15-ին ստեղծվեց ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեն (ՊՊԿ) Ռ. Քոչարյանի նախագահությամբ: ՊԲ կազմավորման երրորդ փուլում (1992 թ. օգոստոսի 14-1993 թ.

նոյեմբերի 10) նկատելի հաջողություններ են ձեռք բերվել ինչպես բանակաշինության, այնպես էլ հակառակորդի կրակակետերի ու ռազմական պլացդարմների վնասազերծման ասպարեզներում: Այս ամենը հիմք ծառայեց 1993 թ. նոյեմբերի 10-ին, ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռ. Քոչարյանի հրամանով, ԻՊՈՒ-ի ԼՂՀ ՊԲ-ի վերակազմավորումն ամրագրելու համար: ՊԲ հրամանատար նշանակվեց Ս. Բաբայանը, առաջին տեղակալ՝ գեներալ Ք. Իվանյանը:

ՊԲ-ի կազմավորման չորրորդ փուլը մի յուրօրինակ փորձաշրջան էր թե հրամանատարության եւ թե գինանձնակազմի համար: Օմարի լեռնանցքից մինչեւ Արաքս գետը ձգվող ռազմաճակատի ողջ երկայնքով Ադրբեջանի լայնածավալ հարձակումներին համարժեք հակահարված տալը, հաստիքա կառուցվածքային ու կադրային բարելավումները հիմք դարձան 1994 թ. հունվարի 4-ին ՊԲ-ի կառուցվածքը ԼՂՀ ՊՊԿ նախագահի կողմից հաստատելու համար, ինչը, փաստորեն, նշանավորեց ՊԲ-ի կազմավորման ավարտը:

Այսպիսով, ՊԲ-ի ստեղծումը կարեւոր նշանակություն ունեցավ հակառակորդի ագրեսիայի կասեցման եւ պետական շինարարության ասպարեզում նվաճումներն ամրապնդելու համար:

ՊԲ-ի, եւ ընդհանրապես՝ Հայկական բանակի կազմավորման գործում մեծ է եղել Հայաստանի Հանրապետության ազգային հերոս, Ժոցախի հերոս Վ. Սարգսյանի ավանդը: Ռազմաճակատի տարբեր դատվածներում մարտական գործողությունների ընթացքում իրենց ռազմական ձիրքով, կազմակերպական տաղանդով եւ անձնական արիությամբ աչքի ընկած պետական ու ռազմական գործիչներից ԼՂՀ ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ս. Օհանյանը նշում է Ռ. Քոչարյանի, Վ. Սարգսյանի, Ս. Սարգսյանի, Ա. Տեր-Թադեւոսյանի, Ս. Բաբայանի, Մ. Մելքոնյանի, Ա. Դուլյանի, Յ. Պողոսյանի, Լ. Ազգալդյանի, Ք. Իվանյանի, Ա. Ջինեւիչի, Մ. Գրիգորյանի, Ս. Կարապետյանի, Ա. Սդաբեկյանի, Վ. Բալասանյանի, Ն. Դանիելյանի, Մ. Հակոբյանի, Վ. Բալայանի, Ֆ. Գզոդյանի, Յ. Հովհաննիսյանի եւ ուրիշների անունները:

Միջազգային փորձագետների գնահատմամբ՝ ներկայումս ԼՂՀ ՊԲ-ն տարածաշրջանում առանձնանում է իր մարտունակությամբ եւ ի վիճակի է կատարել ԼՂՀ-ի անվտանգության երաշխավորի իր առաքելությունը, ինչը վճռական գործոն է հակամարտության կարգավորման գործընթացում:

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

ПОЛИГРАФ